

DOI: <https://doi.org/10.46991/FLHE/2022.26.1.137>

Ամայա ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՎՏԱՐԱՆԴԻ ՆԱԲՈԿՈՎԸ ԵՎ ՆՐԱ ԼՍԱՐԱՆԸ

Նաբոկովի՝ որպես աքսորյալի մասին խոսելիս պետք է հասկանալ, որ նա վարարանդի է խորհրդային Ռուսաստանից, և որ նրա գեղարվեստական գրականությունը արտահայտում է անհեղափոխ աշխարհի արձագանքները: Թեև «աքսորը» սովորաբար բացասական մտքեր է առաջացնում՝ կորուստ, մերժում, ժխտում, դժբախտություն և դժվարություն, այն կարող է նաև ազապարտող լինել: Նաբոկովը վարարանդի գրողի օրինակն է, ով վայելում էր իր առջև բոլորովին նոր աշխարհ: Նրա գեղարվեստական գրականությունը, ընդհանուր առմամբ ապացուցում է դա:

Քանալի բառեր. աքսոր, ինքնություն, մերժում, ժխտում, վարարանդի, գաղթական, արգելված գրականություն, ներգաղթյալ, արվեստագետ, հիշողություն, հայրենասիրություն

Վլադիմիր Նաբոկովը գրում էր «հիմնականում արվեստագետների, արվեստագետ ընկերների և հետևորդների համար» /Nabokov, 1990: 41/: Նա ակնկալում էր, որ իր գրքերը կկարդան այն մտավորականներն ու արվեստագետները, ովքեր ընդունում են նրա հեղինակությունը և արժևորում արվեստը: Հարցազրույցներից մեկում հեղինակը շատ դիպուկ նկարագրել է իր ընթերցողին.

«Իմ բոլոր գրքերը հասցեագրված են ո՛չ «հիմարներին»՝ այն տականքներին, ովքեր հավատում են, որ ես սիրում եմ երկար լատինատառ բառեր, ոչ էլ ուսյալ անչափահասներին, ովքեր սեռական կամ կրոնական այլաբանություններ են գտնում իմ գեղարվեստական գրականության մեջ: Ո՛չ, իմ գրքերը հասցեագրված են Ադամ Ֆոն Լ.-ին (Ադամ Ֆոն Լիբրիկովը Նաբոկովի անվան հերթական անագրամն է), իմ ընտանիքին, մի քանի խելացի ընկերներին և աշխարհի բոլոր ծայրերում գտնվող ինձ նման բոլորին՝ Ամերիկայից մինչև Ռուսաստանի մղձավանջային խորքերը» /Nabokov, 1990: 196/:

Համեմատելով Նաբոկովի գեղարվեստական աշխարհի դիկտատուրան իր ընթերցողների պահանջների հետ՝ Փայֆերը նկատում է, որ, ի տարբերություն ռեալիստների, Նաբոկովը չի «հռչակում աշխարհիկ հեղինակություն կամ ամենակարող սոցիալական իմաստություն», փոխարենը «գործադրում է ինքնագիտակցական արհեստավարժություն՝ հետևելու իր ազդեցության ոլորտի սահմաններին, ինչպես նաև գեղարվեստական

ստեղծագործության հաճույքներին» /Pifer, 1978: 57/: Նրա իդեալական լսարանը պետք է բաղկացած լինի մարդկանցից, ովքեր կասկածի տակ չեն դնում իր գրականությունը: Նաբոկովը հույս է հայտնում, որ նման լսարանը իրեն «հավանելու արժանի և ոչ այդքան տհաճ անձնավորություն» կհամարի: Նա փնտրում է ընթերցողների, ովքեր կարող են ընդհանրություններ գտնել, հավատալ և ընդունել վտարանդու աշխարհի մասին իր վարկածը:

Նաբոկովի լսարանի ընկալումը, անշուշտ, բարդանում էր նրանով, որ նա ուներ երկու էական, բայց շատ տարբեր լսարաններ՝ ամերիկյան և ռուսական: Անգլերենով ստեղծագործելը նրան չխանգարեց կապ պահպանել իր ռուս ընթերցողների հետ Միացյալ Նահանգներում և Խորհրդային Միությունում: Նրա առաջնային մտահոգությունը վերաբերում էր այն ընթերցողներին, ում համար իր ստեղծագործությունները հասանելի չէին: Վտարանդիների և գաղթականների մասին իր ուսումնասիրության մեջ ՄըքՔարթին նկատում է, որ «եթե աքսորյալը հեղինակ է, նա իրեն աքսորել է իր ընթերցողներից. տանը նրա գրքերն արգելված են» /Nabokov, 1990: 158/: Սա որոշակիորեն ապակողմնորոշիչ հայտարարություն է, որը վերաբերում է Նաբոկովին, քանի որ այն ենթադրում է վտարանդու անտարբերությունն իր հայրենի երկրի ընթերցողների նկատմամբ: Դա, անշուշտ, չէր վերաբերում Նաբոկովին, ում նողկանքը Խորհրդային Միության հանդեպ չէր խանգարում նրան շփվել ամբողջ աշխարհի (նույնիսկ երկաթե վարագույրի ետևում) իր ընթերցողների հետ, այն ընթերցողների, ովքեր ընդունում էին իր տաղանդը և մաքսանենգ ճանապարհով արգելված գրքեր տեղափոխում իրենց երկիր: 1969 թվականին տված հարցազրույցում Նաբոկովն ակնարկում է «Ռուսաստանում ապրող ընթերցողի երեկվա նամակ»-ի մասին, որը վերահաստատում է նամակագրությունը նրանց հետ, ովքեր հիանում են իրենց աքսորված հայրենակցով: Նաբոկովը նման նվիրվածությունն ընդունում է որպես հերոսություն և որպես բողոք կոմունիստական ռեժիմի դեմ. «Ես կցանկանայի շատ բան ասել Ռուսաստանում իմ հերոս ընթերցողների մասին, բայց ինձ խանգարում են դա անել. բացի պատասխանատվության զգացումից, ես դեռ չեմ կարողանում գլուխ հանել բազմաթիվ զգացմունքներից» /Nabokov, 1990: 192/: Նա պետք է ի վերջո ընդունի այն փաստը, որ իրեն այնքան էլ շատ չեն կարդում այն լեզվով, որը նա գիտի, նույնիսկ ավելի լավ, քան այն, որը նրան միջազգային համբավ է բերել, բայց նրա ստեղծագործության մեջ մշտապես առկա է մնայուն հույս, որ մի օր ամեն ինչ կարող է փոխվել: Նաբոկովի երազանքը, որ իր գրքերը մի օր հասանելի կդառնան ռուս ընթերցողին, իրականություն դարձավ նրա մահից մեկ տասնամյակ անց: Սովետական հանրագիտարանային բառարանի երկրորդ հրատարակությունը, որը հրատարակվել է 1982

թվականին արդեն ներկայացնում է Նաբոկովի կենսագրության հետևյալ ամփոփագիրը.

«Ռուս-ամերիկյան գրող, Վ.Գ. Նաբոկովի որդին: Վ.Ն. գրել է ռուսերեն և անգլերեն (1940 թ.-ից): Վ.Ն. հեռացել է Ռուսաստանից 1919 թվականին: Վ.Ն. մեկնել է Միացյալ Նահանգներ 1940 թվականին» /Prokhorov, 1982: 862-863/: Հայտնի են Նաբոկովի հետևյալ ստեղծագործությունները՝ «Լուծի՜նի պաշտպանություն», «Նվեր», «Գլխատման հրավեր», «Լուխտա» և «Եվգենի Օնեգին» (թարգմանություն): Ինչ վերաբերում է մյուս գրողների ստեղծագործություններին, ապա Բունինի նույնքան կարճ ակնարկը տալիս է ամփոփում, որն առնվազն հղում է անում նրա ստեղծագործության հիմնական ազդեցություններին և ավանդույթներին: Թվում է, որ Նաբոկովի դեպքում հաստորի խմբագիրները դա անհրաժեշտ չեն համարել, սակայն աքսորին դիմակայելը կարող էր թվարկվել որպես նրա ստեղծագործության կենտրոնական թեմաներից մեկը: Նաբոկովն աքսորը պատկերում է որպես մահվան դատավճիռ կամ հնարավորություն՝ թույլ տալով ընթերցողին որոշել՝ նրա վեպերի հերոսները հաղթող են, թե զոհ: Ստեգները պնդում է, որ այն փաստը, որ Պնինը «երբեք չի ընկղմվում ինքնախղճահարության մեջ կամ չի ընդունում համեստ կեցվածք ու դիրք», նրա հաջողության գրավականն է, ինչի հետևանքով մենք նրան ընկալում ենք որպես «ավելին, քան ամբիցիոզ, եսակենտրոն, ուճազգված մշակույթի խղճուկ զոհ, որից նա աքսորված է, և որտեղ նա միշտ աքսորված է լինելու» /Prokhorov, 1982: 16,98/: Ի հակադրություն, նա Քինբրոտին անվանում է «զոհի գրոտեսկային ծաղրերգություն, ով ականա դատապարտում է իրեն խելագարության, համասեռամոլության և հալիտոզի համար» /Stegner, 1966: 16/: Պնինի և Քինբրոտի համադրումը ցույց է տալիս, թե մարդիկ որքան տարբեր են դիմագրավում արտագաղթի մարտահրավերներին, և ինչու են նրանցից ոմանք հաջողության հասնում, իսկ մյուսները՝ ձախողում:

Թոքերը պնդում է, որ «Նաբոկովի գրչի տակ ռուս ներգաղթյալի կերպարն Ամերիկայում դառնում է աքսորի արվեստի, արտագաղթելու կամքի, այդ կամքի բարոյականության, խղճի անհանգստության և կյանքի հանդեպ սիրո միջև հակասության ուսումնասիրություն» /Toker, 1989: 22/: Այնուամենայնիվ, Նաբոկովի աքսորի տարիներին իր տոկունության գաղտնիքը նրա ընտանիքի մեջ է՝ այն միակ բաղադրիչը, որը նկատելիորեն բացակայում է Պնինի և Քինբրոտի կյանքում: Նաբոկովի կինն ու որդին օգնեցին հանգստացնել կորստի ցավն ու հիասթափությունը: Ընտանիքը օգնեց Նաբոկովին նաև զգալ իր ներսի արվեստագետի «տեղահանությունը». Տիմոֆեյ Պնինն իր «զինաթափող հնաճ հմայքով» և Չարլզ Քինբրոտը՝ իր ջերմեռանդ կրթով՝ աշխարհին պատմելու այդ «հեռավոր հյուսիսային երկրի»՝ իր Զեմբլայի մասին /Nabokov, 1989: 98/: Նա-

բոկովն ասել է. «Ես միշտ, նույնիսկ որպես դպրոցական Ռուսաստանում, պնդել եմ, որ արժանավոր գրողի ազգությունը երկրորդական նշանակություն ունի» /Nabokov, 1990: 63/: Ըստ էության, ամերիկյան մշակույթին միաձուլվելու ցանկությունը՝ իր կողքին ունենալով կնոջն ու որդուն, օգնում է դիմակայել այն ցավին, որը նա զգում է իր հոր սպանության, 1917 թվականի հեղափոխության և Ռուսաստանը լքելու անհրաժեշտության պատճառով:

«Պնին»-ի և «Գունատ կրակ»-ի հերոսներն ավելի քիչ բախտավոր են: Հետաքրքիր է, որ բացի ընդհանուր թեմայից, այս վեպերը նաև որոշակիորեն նման են կառուցվածքով, մասնավորապես այն գլխի մի մասը («Պնին»-ի Գլուխ Չորրորդը), որը Նաբոկովն ի սկզբանե գրել է իր ինդեքսային քարտերի վրա՝ նպատակ ունենալով օգտագործել դա որպես «Գունատ կրակ»-ի գլուխ: Այս գլուխն սկսվում է թագավորի՝ Վիկտորի երևակայական հոր նկարագրությամբ, ով նախընտրում է «աքսորյալներին» և քինբոտյան ոճով վերհիշում իր թագավորական անցյալը /Nabokov, 1989: 85/: Երկու ստեղծագործություններն էլ Նաբոկովի լեզվի տիրապետման հիանալի օրինակներ են: Սա աննկատ չի մնում քննադատների կողմից. օրինակ՝ Բրաունը գրում է, որ «նման օտար ծագումով և խառնվածքով գրողին բնորոշ է բնիկ հեղինակների համար ոճային շատ հարցերում օրինակ ծառայելը» /Nabokov, 1989: 4/: Նացիստների կողմից մահապատժի ենթարկված Միրա Բելոզկինի՝ Պնինի հիշողությունը և ֆրանսիական Ռիվիերայի իր վիլլայում լքված Քինբոտի՝ թագուհի Դիզայի կերպարը, անձնավորում են այն կարոտը, որ այս մարդիկ ունեն անցյալի հանդեպ, որը չի կարելի նորից վերապրել: Որքան էլ Պնինն ու Քինբոտն առաջին հայացքից տարբերվում են, նրանք վճռական են պահպանել իրենց նախորդ կյանքի էությունը՝ լիովին գիտակցելով առաջադրանքի անհնարինությունը: Ինչ-որ առումով նրանք նույնպես աչքի են ընկնում ամբոխի մեջ այնպես, ինչպես Նաբոկովն էր աչքի ընկել իր ժամանակակիցների մեջ:

Հեղինակի ատելությունը խորհրդային կարգերի նկատմամբ չի բացառում իր ազգի հանդեպ հայրենասիրական զգացմունքները: Իր ողջ կյանքի ընթացքում նա հավակնում էր ապաքաղաքական դիրքի, սակայն չէր կարող անհաղորդ մնալ իր հայրենի երկրում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններին: Նա այդպես էլ ամբողջությամբ չկտրվեց Ռուսաստանից: Պնինի հետ նմանություններ առաջացնող նկարագրության մեջ Մրք-Քարթին նշում է, որ աքսորյալները ոչ միայն կախված են փոստից, այլև «հայտնի թերթեր ընթերցողներ և թերթերի հատվածներ հավաքողներ են: Այն փաստը, որ իրենց երկրի մամուլը գրաքննության է ենթարկվում (ըստ երևույթին, նրանց աքսորի հետևանքը) ստիպում է նրանց ավելի շատ կարոտել ասեկոսներն ու տեղեկությունները, որոնք նրանք կարող են իրար կապել» /McCarthy, 1985: 70/: Նաբոկովն ուշադիր հետևում

էր լուրերին և միշտ հաճույքով արտահայտում իր կարծիքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի սարսափները և Ռուսաստանի վճռորոշ դերը դրա ելքում առաջացրել են հայրենասիրության խորը զգացմունքներ: Նա Ուիլսոնին ուղղված նամակում գրում է Կարմիր բանակի հաղթանակի իր հույսերի մասին.

«Շուրջ 25 տարի վտարանդի ռուսները փափագում էին, որ ինչ-որ բան պատահեր, ինչ-որ բան, որը կկործաներ բոլշևիկներին, օրինակ՝ լավ արյունալի պատերազմ: Հիմա գալիս է ողբերգական ֆարսը: Իմ բուռն ցանկությունը, որ Ռուսաստանը, չնայած ամեն ինչին, կարողանա հաղթել կամ ավելի շուտ իսպառ վերացնել Գերմանիան, որպեսզի աշխարհում գերմանացի չմնա, պետք է սայլը ձիուց առաջ դնել, բայց ձին այնքան զգվելի է, որ ես նախընտրում եմ դա անել» /Nabokov, 1990: 46/:

Միլիոնավոր մարդկանց մահվան պատճառ դարձած մարդկային ողբերգությունը ջնջում է բոլոր քաղաքական տարածայնությունները և ամրապնդում կապը Ռուսաստանի և նրա նախկին քաղաքացիների միջև: Այնուամենայնիվ, Նաբոկովը կուրացած չէր հայրենասիրության ճնշող զգացումով, և պատերազմի ավարտին, երբ նացիստական բանակը ետ էր քաշվում, և հաղթանակը մոտ էր, նա բացահայտ դիմադրում էր Ստալինի և նրա ռեժիմի հանդեպ պաշտամունքին: Նրա ռուսերեն «Անկախ նրանից, թե ինչպես» պոեմը (1944), որը գրվել է Քեմբրիջում և հետագայում թարգմանվել է անգլերեն, արտացոլում է նրա դիրքորոշումն ընդդեմ տոտալիտարիզմի: Բանաստեղծը բողոքում է խորհրդային իշխանության կողմից խլված ազատությունների և ռուս ժողովրդին պարտադրված սարսափների դեմ.

«Անկախ նրանից, թե ինչպես է խորհրդային փայլազարդը շողում մարտական կտավի վրա, անկախ նրանից, թե ինչպես է հոգին լուծվում խղճահարության մեջ, ես չեմ կոտրվի, չեմ դադարի զգվել լուռ ստրկության կեղտից, դաժանությունից և ձանձրոյթից: Ո՛չ, ո՛չ, բղավում եմ, հոգիս դեռ առույգ է, դեռ աքսորում քաղցած,

Ես դեռ բանաստեղծ եմ, հաշվի՛ առեք ինձ» /Nabokov, 1970: 1-8/:

Կշեռքի վրա են դրվել դրական և բացասական կողմերը, քանի որ բանաստեղծը վերահաստատում է իր դիրքորոշումն ընդդեմ ճնշող իշխանության՝ չնայած փառահեղ հաղթանակին: Բոյդը նշում է «սովետամետ էյֆորիան», որը պատեց երկիրը, և թե ինչպես Նաբոկովը «զգաց, որ ժամանակն է բողոքելու Ռուսաստանի սեփական զանգվածային մարդասպանի հերոսացման դեմ, նույնիսկ եթե դա այն հասարակությունն էր, որը չէր ուզում լսել» /Nabokov, 1993: 60-61/։ Հետաքրքիր է, որ բանաստեղծության ռուսերեն տարբերակի ճշգրիտ ձևակերպումը պարունակում է երեք բառ՝ «Սովետական Փայլազարդ Ռուս», որտեղ «Ռուս»-ը հին ռուսերենից «Ռուսաստանն» է /Nabokov, 1970: 2/։ Ռուսի և «սովետի» զուգա-

կցումը ամրապնդում է ավանդույթը քանդող ռեժիմի անվան հետ համատեղելու անհեթեթությունը: Բանաստեղծության անգլերեն տարբերակում Ռուսն ամբողջությամբ անհետանում է և թարգմանվում է որպես «Սովետական փայլագարդ», ճիշտ այնպես, ինչպես ռուսերեն բնօրինակից «ռաբստվո»-ն դառնում է «ծառայություն», որն այլապես բառացի կթարգմանվեր որպես «ստրկություն»: Նաբոկովը բանաստեղծ է, ով բողոքում է պատմության բռնակալների դեմ՝ պնդելով, որ աքսորը ճիշտ լուծում է, երբ դիտարկվում է այլընտրանքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. McCarthy M. Occasional Prose. San Diego: Harcourt Brace Jovanovich, 1985.
2. Nabokov V. Pale Fire. New York: Vintage Books, 1989.
3. Nabokov V. Pnin. New York: Vintage Books, 1989.
4. Nabokov V. Poems and Problems. New York: McGraw, 1970.
5. Nabokov V. Selected Letters 1940-1977. Fort Washington: Harvest Books, 1990.
6. Nabokov V. The American Years. Princeton: Princeton UP, 1993.
7. Pifer E. On Human Freedom and Inhuman Art: Nabokov // *The Slavic and East European Journal*, 22, 1978.
8. Prokhorov A. Nabokov V. V. // *Soviet Encyclopedic Dictionary*. Moscow: Soviet Encyclopedia, 1982.
9. Stegner P. Escape into Aesthetics: The Art of Vladimir Nabokov. New York: Dial, 1966.
10. Nabokov V. Strong Opinions. New York: Vintage Books, 1990.
11. Toker L. The Mystery of Literary Structures. Ithaca: Cornell UP, 1989.

А. СОГОМОНЯН – Изгнанный Набоков и его аудитория. – Говоря о Набокове как об эмигранте, следует иметь в виду, что он был изгнан из Советской России и что его художественная литература отражает реакцию исчезнувшего мира в качестве компенсации за «незапланированный» отъезд из дома. Несмотря на то, что «изгнание» обычно вызывает негативные мысли – потери, неприятие, отрицание, несчастье и лишения – оно также может быть и «освобождающим». Набоков – пример писателя-эмигранта, которому нравилось иметь перед собой целый новый мир для изучения, использовать его как зеркало, чтобы противостоять старому миру и своему прошлому. В целом, его произведения доказывают это.

Ключевые слова: изгнание, личность, неприятие, отрицание, экспатриант, мигрант, запрещенная литература, иммигрант, деятель искусств, память, патриотизм

A. SOGHOMONYAN – *Exiled Nabokov and His Audience.* – When talking about Nabokov as an expatriate, it should be understood that he was exiled from Soviet Russia and that his fiction expresses the reactions of the disappeared world as a means of compensation for leaving home unplanned. Even though “exile” usually evokes negative thoughts – loss, rejection, denial, misfortune and hardship – it can also be liberating. Nabokov is an example of an exiled writer who enjoyed having a whole new world in front of him to study, to use it as a mirror to confront the old world and his past. His fiction, in general, seems to prove it.

Key words: exile, identity, rejection, denial, expatriate, migrant, forbidden literature, immigrant, artist, memory, patriotism

Received: 29.04.2022

Revised: 30.05.2022

Accepted: 17.06.2022